ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 23.11.2017թ. ԹԻՎ 139-Ա1 ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ 1 դեկտեմբերի 2017թ.,
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 11:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ

Ա.Ալավերդյան ՆԾ պետ

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Ա. Մաջարյան ՆԾ ինժեներ

Գ. Չաքրյան ԴԾ ԲԴՀ ինժեներ

Հանձնաժողովի բացող անդամներ՝

Բ.Գևորգյան ՆԾ ՀՕԿ պետ

Բ.Գալստյան ՊԳՀԾ պահեստապետ

Հանձնաժողովի քարտուղար

Գ. Սարգսյան ՊԳՀԾ մասնագետ

Օրակարգ՝

1. Ընկերության կարիքների համար մաքսային միջնորդի (բրոքեր) ծառայությունների ձեռքբերման <<ՀԱՆ-ԳՀԾՁԲ--07/17>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացում.

Նիստը հայտարարվեց բացված և հրապարակվեցին տվյալ ծառայության տեսակի համար գնման հայտով սահմանված առավելագույն գները.

Չափաբաժին	Ծառայության անվանումը	Գնման հայտով սահմանված առավելագույն գինը
1	***Մաքսային միջնորդի (բրոքեր) ծառայություններ, այդ թվում.***	
	Ավիատրանսպորտով միևնույն մատակարարի կողմից առաքված/արտահանվող մեկ բեռի մաքսային ձևակերպում	102000
	Մեկ տրանսպորտային միջոցով (ավտոմեքենա, վագոն, բեռնարկղ) առաքված/արտահանվող բեռի մաքսային ձևակերպում	90000
	Փոստով առաքված/արտահանվող մեկ բեռի մաքսային ձևակերպում	72000
	Մաքսային մարմինների կողմից հայտարարագրման ընթացքում պահանջվող այլ փաստաթղթերի ձևակերպում, ինչպես նաև պատվիրատուի հանձնարարության դեպքում և ըստ անհրաժեշտության բեռների սերտիֆիկացման հետ կապված այլ գործողություններ՝ յուրաքանչյուրի համար	18000

Ընդ որում, ծառայության մատուցման արժեքը 2018թ. համար չպետք է գերազանցի 1 500 000 ՀՀ դրամը:

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները՝ <<Դիպյու>> ՍՊԸ (հասցե՝ ք. Երևան, Դեղատան փողոց, 13 շենք, բն.8, հեռ. 091462200) և <<ՏՐԱՆՍԻՄՊԵՔՍ>> ՍՊԸ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ <<ՏՐԱՆՍԻՄՊԵՔՍ>> ՍՊԸ ներկայացրած հայտում բացակայում են բոլոր պահանջվող փաստաթղթերը:

Այնուհետև գնահատվեց <<Դիպյու>> ՍՊԸ հայտը, որում ներառված փաստաթղթերը համապատասխանում էին հրավերով նախատեսված պայմաններին և հրապարակվեց <<Դիպյու>> ՍՊԸ գնային առաջարկը.

Չափաբաժին	Ծառայության անվանումը	<<Դիպյու>> ՍՊԸ գնային առաջարկը /ՀՀ դրամ/
1	***Մաքսային միջնորդի (բրոքեր) ծառայություններ, այդ թվում.***	***312 000***
	Ավիատրանսպորտով միևնույն մատակարարի կողմից առաքված/արտահանվող մեկ բեռի մաքսային ձևակերպում	102000
	Մեկ տրանսպորտային միջոցով (ավտոմեքենա, վագոն, բեռնարկղ) առաքված/արտահանվող բեռի մաքսային ձևակերպում	102000
	Փոստով առաքված/արտահանվող մեկ բեռի մաքսային ձևակերպում	90000
	Մաքսային մարմինների կողմից հայտարարագրման ընթացքում պահանջվող այլ փաստաթղթերի ձևակերպում, ինչպես նաև պատվիրատուի հանձնարարության դեպքում և ըստ անհրաժեշտության բեռների սերտիֆիկացման հետ կապված այլ գործողություններ՝ յուրաքանչյուրի համար	18000

Հանձնաժողովն արձանագրեց, որ 2-րդ և 3-րդ պարբերություններով ներկայացված ծառայությունների համար <<Դիպյու>> ՍՊԸ գնային առաջարկները գերազանցում են գնման հայտով սահմանված առավելագույն գները.

<u>Հանձնաժողովը քննարկման արդյունքում միաձայն որոշեց.</u>

1. Հիմք ընդունելով սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետը մերժել <<ՏՐԱՆՍԻՄՊԵՔՍ>> ՍՊԸ հայտը,
2. Ղեկավարվելով հրավերի 1-ին մասի 8.6 կետի 1-ին և 8.7 կետի <<բ>> ենթակետերով, գների նվազեցման շուրջ բանակցություններ անցկացնելու նպատակով, կասեցնել հայտերի բացման նիստը:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 2017 թ.-ի դեկտեմբերի 7-ին ժամը 11:30, ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33, <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ վարչական շենքում:

Ա.Ալավերդյան		Հանձնաժողովի նախագահ
Ա. Մաջարյան		Հանձնաժողովի անդամ
Գ. Չաքրյան		Հանձնաժողովի անդամ
Բ. Գևորգյան		Հանձնաժողովի անդամ
Բ.Գալստյան		Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի քարտուղար